Երևան քաղաքի պատմականորեն ձևավորված քաղաքաշինական կառուցվածքի պահպանման եւ Հյուսիսային պողոտայի անհրաժեշտության համադրման հայեցակարգային նախագիծ

Այլընտրանքային պողոտա

Երևանի պատմական միջուկի ձեւավորման եւ զարգացման փուլային ուրվագծեր

1828

1837

1850

1865

1909

1924

1960

2011

Հյուսիսային պողոտայի ուռճման տարբերակներ

Լուսանկարը՝ Ալբերտ Գրիգորյանի

Լուսանկարը՝ Ալբերտ Գրիգորյանի



Գոյություն ունեցող իրավիճակը ըստ 1999 թվականի

Լուսանկարը՝ Ալբերտ Գրիգորյանի

2001

2011

Գուշակվող ուղղություններ

Գլխավոր հատակագիծ U 1:1000

Գլխավոր փողոցի փակվածքի դրվագ

Երեւանյան մասնագիտական միջավայրում Հյուսիսային պողոտայի ուռճման գաղափարը հնչել է դեռեւս մոտ 10-րդ դարից: Սակայն, այն իր արդի քաղաքային քաղաքաշինական կառուցվածքը սկսել է ձեւավորել 17-րդ դարից միայն՝ հանդիսանալով պարսկական խանի նստավայր հատկապես ունենալ է արեւելյան քաղաքին հատուկ հորաշեն ու կանաչեն տներ: «**19-րդ դարի սկզբի դրությամբ Երեւանը, ոչ մեծ, հետամնաց, տիպիկ արեւելյան քաղաք էր՝ ծուռ ու մուռ փողոցներով (որոնք կառուցապատված էին մեկ, հազվադեպ երկու, մեծամասամբ կավաշեն ու տափակ կտուր ունեցող տներով), շուկայական հրապարակով, պղտատու եւ խառդի այգիներով ամբողջովին ծածկված քաղաքատարածությամբ**» (Հ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 465): 19-րդ դարի երկրորդ կեսին Թուրքմենչայի պայմանագրով Երեւանի ողջ նահանգը, այդ թվում՝ Երեւան քաղաքը անցնում է Ռուսական կայսրության ենթակայության տակ: Դրան հաջորդում է Երեւան քաղաքի զարգացումը, մասնավորապես պատմական միջուկի ձեւավորումը: Այդ ժամանակաշրջանում Երեւան քաղաքի հատկապես բանուկ հատվածներում (պարզվում հանրապետության հրապարակի շուրջ) եռում էր քաղաքային կյանքը: Կառուցվում էին նախկինների համեմատ ավելի ելբորդական քաղաքային կերպար ունեցող շենքեր, տեղական սեւ ու երբեմն կարմիր տուֆից, առաջին հարկերում խանութներ էին, վերին հարկերում՝ բնակելի տներ: Այդ ժամանակ քաղաքի գլխավոր փողոց հանդիսացող Ստամբուլի փողոցում կառուցվեց տրամվայ, որը միացնում էր քաղաքի բարձրադիր հյուսիսային հատվածը քաղաքի ստորին մասում գտնվող առեւտրական տարածքներով կառուցապատված հատվածների հետ: Ռուսական կայսրության անկմանը հաջորդած շրջանում Հայաստանի նորանկախ Հանրապետության առաջին վարչապետի, որն իրեն մասնագիտությամբ ճարտարապետ էր, իր նախաձեռնությամբ Երեւան է հրավիրվում այն ժամանակ Պետերբուրգում ճանաչված ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին: Սակայն, Առաջին Հանրապետության գոյության երկու տարիները հնարավորություն չտվին Թամանյանին եւ գիտնականին իրականացնել շրջանների աշխատանքները: Կարմիր բանակի օկուպացիայի պատճառով բազմաթիվ մտավորականներ պարտադիր ելան լքել Հայաստանը, որոնց մի մասը վերադարձավ ավելի ուշ՝ շենացնելու արդեն Երկրորդ խորհրդային Հայաստանի Հանրապետությունը: «**Մոսկեական իշխանության օրոք Երեւանում սկսվում են մասշտաբային բարեփոխումներ, 1924 թ. Ալեքսանդր Թամանյանի նախագծով՝ ազգային եկեղեցական ճարտարապետությամբ կառուցվում է Երեւանը: Այդ վերանորոգումների ժամանակ քաղաքն ամբողջությամբ փոխում է իր տեսքը, ինչի արդյունքում ոչնչացվում էին հանարյա բոլոր հին շինությունները այդ թվում նաեւ շատ պատմա-մշակութային արժեքներ՝ եկեղեցիներ, բերդեր, ակվեդուկներ: Կառուցվում էին նոր փողոցներ, քաղաքը էլեկտրաֆիկացվում է, անցկացվում էին շրջանային խողովակներ, կառուցվում է կոյուղային համակարգ**» (hy.wikipedia.org/Երեւան): Դրան հաջորդած տարիներին, ու հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանում զարկ է տրվում է քաղաքի զարգացմանը. կառուցվում են գեղեցիկ ոչ քաղաքի կենտրոնի Երեւանին հատուկ շինություններ, որոնց սյուռը զարդարում են քաղաքը: Դրանցից հատկապես Ժողովրդական տունը (միմա՝ Օպերայի շենքը) իր կիզ հրապարակով ու պուրակներով. Լենինի (միմա՝ Հարապետության) հրապարակը իր ոչ համաչիրով, Լենինի (միմա՝ Մաշտոցի) պողոտան՝ Ծաղկած շուկայով, Մատենադարանով եւ Ստալինի (միմա՝ Մայր Հայաստանի) արձանով:

1960-70-ական թվականներին Երեւանը արդեն անցնում է խոշորագույն քաղաքների շարքը: Այդ ժամանակաշրջանում քաղաքում կուտակված նոր արդյունաբերական հզորություններ եւ սոցիալական ձգողությունը տարածելով հանրապետության ամբողջ տարածքով հանդերձ խթանեց այդպես կոչված Երեւանյան ազգաբնակության ձեւավորմանը: 1971 թվականին մշակված գլխավոր հատակագծով առաջադրվեցին որոշակի մարտահրավերներ քաղաքային հիմնահարցերի լուծման վերաբերյալ: Մասնավորապես մետրոպոլիտեի կառուցումը, բերեց քաղաքի տարածական զերազաղ ածին եւ զանգվածային բնակաշինությանը, որոնք չէին զուգակցվում դրանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքների՝ ճանապարհների, հասարակական սպասարկման կենտրոնների ու խոշոր կանաչապատ տարածքների կայացման հետ: Կանաչապատումը հիմնականում իրականացվում էր բնակելի կառուցապատման շրջանում՝ նեղքին պուրակների ստեղծմամբ՝ առանց հիմնելու հանրաքաղաքային նշանակության կանաչ տարածքներ: Այդ տարիներին արդյունաբերության առաջ անի հետ քաղաքում սրվեցին բնապահպանական խնդիրները: 1980-ականներին անդրադարձ եղավ նաեւ քաղաքի կենտրոնական հատվածում դեռեւս ազատ տարածքներին, մասնավորապես միկ այդ թանկարժեքական երեւանին ոչ հատուկ բազմահարկ շենքերի կառուցմանը, որոնք փոխեցին քաղաքապատկերը (skyscape): 1988 թվականի ավերիչ երկրաշարժը, ապա խորհրդային միության փլուզումը հնարավորություն չտվեցին լուծելու շրջադարձում հայտնված նեանարհա մի շարք խնդիրներ, որոնց գուշակվեցին նաեւ անկախության հաջորդած ենթդեմիկ շրջափակման տարիները:

Բնականաբար նորանկախ Հայաստանի Հանրապետությունը այդ տարիներին քաղաքաշինական ծրագրային ու խոշոր նախագծերին անդրադառնալու հնարավորություններ չուներ: Շնայած նրան, որ էներգետիկ ճգնաժամի տարիներին զգալի կերպով տուժեցին քաղաքի ծայրամասերում գտնվող կանաչանապատ տարածքները, քաղաքի կենտրոնական հատվածներում դրանք զրեթե մնացին նույն կերպ: Ցնտեսության ակտիվացման առաջին նշույլներին զուգահեռաբար. 20-րդ դարի վերջին տասնամյակում Երեւանում նոր շինարարական աշխատանքների նշույլներ երեւացին: Առաջին արդյունքները նախ երեւացին քաղաքի կենտրոնական հատվածի անմիջաբար վիճակում գտնվող կանաչ տարածքներում, որտեղ արագ կերպով վերջին կառուցվել հասարակական մեծի օջելիներ: Դրանք հիմնականում կատարվում էին նախայի հաշվին՝ լիովին անտեսելով խոշոր մասշտաբով ծրագրային մոտեցումները: Դրանց հաջորդեցին է ավելի հավակնոտ ծրագրերի իրականացումները, որոնցից առաջինն էր Կիեւսանոր Թամանյանի կողմից մշակված գլխավոր հատակագծի կարեւորագույն ու ամենավիճելի լուծումներից մեկը՝ Կոպատաչան պողոտան:

Հյուսիսային պողոտան այսօր

2000-ական թվականներին, երբ ողջ հանաշխարհային տնտեսությունը զարգացման արագ տեմպեր էր հավաքում, որն իր հերթին ունենում էր բարեբեր ազդեցություն Հայաստանի տնտեսության վրա Կառավարության մակարդակով եւ ինչորդությամբ զարկ է տրվում շինարարությանը՝ որպես տնտեսության զերակա ուղղություն: Հատկապես Երեւան քաղաքի կենտրոնում առկա լկատուգապատված հողային ռեսուրսները նպաստեր հանդիսացան նման ծրագրերի իրականացման համար, մասնավորապես՝ դեռեւս խորհրդային տարիներին իրականացված Թամանյանի նախագծով ամրագրված Արարատյան (միմա՝ Հյուսիսային) եւ Գլխավոր պողոտաները: Հատկապես առաջինը ուներ շոշափելի գործառնական նշանակություն՝ կապել քաղաքի վարչական գործառությամբ շեմքերով շրջապատված գլխավոր Հանրապետության հրապարակը, քաղաքի նախկին Մշակույթին, այսօր արդեն ժամանցային հրապարակի հետ: Տարածքում առկա բնակիչների եւ զբաղեցրած շեմքերի իրացման աշխատանքները, լնայած կրան, որ խնդրահարույց էին դրանց եւ մեր քննման դաշտին: Կարգի, Թումանյան փողոց: Աբովյան փողոցին միացնող այդ ուղղությունը, որը հատում էր Տերյան, Պուշկին, Լալայանց փողոցները անկյունագծով հյուսիս-հարավ միջօրեականի կկատվածք (մոտավորապես 52 աստիճանի անկյան տակ) ներառում էր մի շարք պատմական ու մշակութային հուշարձաններ՝ թվագրվող 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Դրանով նախեւառաջի կարելի է ասել կազմաքանդվում էր ռուսական շրջանում ձեւավորված քաղաքային կառուցվածքը: Այս գաղափարը բազմաթիվ անգամներ քննարկվել էր նաեւ խորհրդային տարիներին բազմաթիվ մասնագետների կողմից, սակայն այն հանարվել էր դեռեւս ոչ ամբողջական ու հուժ: Անկախության տարիներին եւս տեղի ունեցան մի շարք առարկայական քննարկումներ ծրագրային լուծումների վերաբերյալ, սակայն ցավոք իրականացված տարբերակը ուներ բազմաթիվ լուծված խնդիրներ ու վիճահարույց լուծումներ:

Նախագծի հայեցակարգը

Այսօր այն արդեն իրականություն է, եւ լնայած արդեն մոտ յորս տարի է ինչ պաշտոնապես բացվել է, սակայն այն դեռեւս ամբողջովին իրացված չեն: Հաշվի առնելով իր գործառնական նշանակությունը այն մարդաշատ է, բայց թե՛ բնակելի բարձր հարկերում, թե՛ առաջին հարկերում գտնվող հասարակական նշանակության տարածքներում կան տարածքներ, որոնք դեռեւս իրացված չեն: «Չէ որ, Հյուսիսային պողոտայի վերաբերյալ բոլոր գաղոնները, դրա Երեւանի «մշակութային քաղաքի» լինելուն համապատասխան լինելու մասին, դրա հանգստագործական ու անմարդակին լինելու մասին, բայց եւ այնպես դա ամբողջորեն նոր հանրային տարածք է, ինչպիսիք պատրաստին հազվադեպ են հանդիպում, եւ մարդիկ արդեն սովորում են դրան գբոսնելով ու ժամանցվելով...» (Անդրեյ Իվանով, http://agency.archi.ru)

Հաշվի առնելով այդ փաստը որոշվեց իրականացնել տեսական փորձ վերաբնելու 1999 թվականին մեկնարված այս խոշոր քաղաքաշինական նախագծի իրականացման տարբերակները եւ բացահայտել այն ընդունելի լուծումը, որի իրականացման դեպքում հնարավոր կլիներ խուսափել քաղաքի պատմականորեն ձեւավորված կառուցվածքի, դրա բարկացուցիչ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ այլ արժեքավոր շինությունների քանդումից՝ միաժամանակ սպասարկելով պողոտայի գործառական - կենցաղային նշանակությունը՝ այն է կապել երկու հանրային կենտրոնները միմյանց: Կարեւորվել է նաեւ առկա սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսները, որոնց զգալի մասը կարող էին վերածվել հանրային օգտագործման (ընդհանուր օգտագործման) տարածքների:

Կատարված ուսումնասիրությունում հատկապես հաշվի են առվել 1999 թվականին տարածքում առկա հուշարձանները, առկա կառուցապատումն ու տարածքում համաքաղաքային նշանակության հանրային ժամանցային միջավայր ստեղծելու գաղափարները, որոնք լայնորեն իրականացվել են մի շարք քաղաքների կենտրոնների վերակառուցման եւ վերակենդանացման ծրագրերում:

Հեղինակներ՝
Սարհատ Պետրոսյան
mail@sarhat.am
www.sarhat.am

Աննա Ակտարյան
aktarianna@gmail.com

Sarhat & Partners

urbanlab EVN ԵՐԵՎԱՆ

www.urbanlab.am
www.facebook.com/urbanlabyerevan

Հեղինակային իրավունքները պահպանվում են:

Հուշարձաններ

Ֆոնային կառույցներ

Նորակառույցներ

Հյուսիսային պողոտայի այլընտրանքային նախագծի Գլխավոր հատակագիծ U 1:1000